

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



*ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

ԵՐԵՎԱՆ 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվության ապահովման և հետադարձ կապի քաղաքականության նշանակությունը, նկարագրությունը և կիրառման ոլորտները	3
Համալսարանում շահակիցների տեղեկատվության հիմնական մեխանիզմներն ու մեթոդները	5
Շահակիցների հետ կապի հաստատման մեխանիզմներն ու գործիքները	5
Շահակիցների հետ հետադարձ կապի սկզբունքները	6
Պատասխանատվության և իրավասությունների բաշխման մատրից	9
Շահակիցների հետ հարցազրույցի ուղեցույցներ	9
Հետադարձ կապի ստացման մեխանիզմների վերանայման գործիք	14
Հարցումների անցկացման մեթոդաբանությունը	16
Հարցաշարերի վերանայում	18
Համալսարանի շահակիցներին տեղեկատվության ապահովման քաղաքականության գրաֆիկական նկարագրություն	9
Հավելվածներ/հարցաթերթիկներ	20
Գրականություն	54

**ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ
ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Որպես «շահակից» ընդունվում է այն անձը (անձիք) կամ կառույցը, ով իր գործունեությամբ անմիջականորեն ազդում է Համալսարանի գործունեության վրա կամ կրում է Համալսարանի գործունեության ազդեցությունը:

Այդ տեսակետից առանձնացվում են համալսարանի հիմնական շահակիցների երկու խումբ՝

- **Ներքին շահակիցներ** (ուսանողները, պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմը),
- **Արտաքին շահակիցներ** (շրջանավարտները, գործատուները, դիմորդները և նրանց ծնողները, ոլորտի պետական և մասնագիտական կառույցները և այլն):

Ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվության ապահովման և հետադարձ կապի քաղաքականության նշանակությունը, նկարագրությունը և կիրառման ոլորտները

Սույն քաղաքականությունը՝ որպես համալսարանի որակի ապահովման համակարգի բաղադրիչ մաս, **հիմնվում է** հետևյալ փաստաթղթերի վրա՝

- Մասնագիտության կրթական ծրագրի հավատարմագրման չափանիշներ
- ՀՀ-ում գործող ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշներ
- Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղեցույցներ (ESG)
- ԱԲՀ ռազմավարական զարգացման ծրագիր:

Ավանդական բժշկության համալսարանի «Ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվության ապահովման և հետադարձ կապի քաղաքականության» **նպատակներն են՝**

- համալսարանի բոլոր շահակիցներին տրամադրել համալսարանի գործունեության, ձեռքբերումների և գործընթացների որակի վերաբերյալ օբյեկտիվ և հավաստի որակական և քանակական տեղեկատվություն,

- հետադարձ կապի մեխանիզմների միջոցով ապահովել համալսարանի կապը նրա շահակիցների հետ,
- ուսումնասիրել հետադարձ կապի միջոցով շահակիցներից ստացված արձագանքը և դրա հիման վրա բարելավել գիտակրթական գործունեությունը,
- արդյունքների հիման վրա կրթության բարելավմանն ուղղված միջոցառումների և որոշումների վերաբերյալ տեղեկացնել շահակիցներին:

Քաղաքականության իրականացումը հնարավորություն կտա՝

- գնահատել ներքին և արտաքին շահակիցների անմիջական և ոչ անմիջական ներգրավումը համալսարանի կառավարման գործընթացներին,
- չափել համալսարանի գործունեության արդյունավետությունը,
- զարգացնել կապը շահակիցների հետ:

ԱԲՀ-ի ներքին և արտաքին շահակիցներից հետադարձ կապի միջոցով ստացված տվյալները կիրառվում են հետևյալ նպատակներով՝

- Բուհի ինքնագնահատման գեկույցը մշակելիս,
- ՄԿԾ-ների մշակման, մշտադիտարկման և վերանայման ժամանակ,
- Բուհի գործունեության վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների խմբերի հետ հաղորդակցման ժամանակ,
- Դասախոսների գնահատման ժամանակ,
- Բուհի գործունեության տարբեր ոլորտների արդյունավետությունը գնահատելիս.
- ընդունելության գործընթաց,
- գնահատման գործընթաց,
- ավարտական քննությունների կազմակերպման,
- նյութատեխնիկական հագեցվածության ապահովման մակարդակի և այլն:
- Բուհի ռազմավարական ծրագիրը հստակեցնելիս, ինչպես նաև գնահատելիս,
- Որոշումներ կայացնելիս,
- Ուսանողների առաջադիմության վրա ազդող գործոնները վերհանելիս,
- ԱԲՀ-ի կողմից տեղեկատվության ապահովման որակի գնահատման ժամանակ,

- Ուսանողական աջակցության փաթեթը մշակելիս՝ ուսանողների կարիքների գնահատման ժամանակ:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Համալսարանի շահակիցների տեղեկատվության հիմնական մեխանիզմներն ու մեթոդներն են՝

- Ռեկտորատի և գիտական խորհրդի նիստերը,
- Համալսարանի պաշտոնական կայքում և սոց. ցանցերում հրապարակումների իրականացումը,
- Համալսարանի տեղեկատվական նյութերի պատրաստումը և հրապարակումը (բուկլետներ, համալսարանի գիտական հոդվածների ժողովածու և այլն):
- Նորությունների հրապարակումը,
- ԶԼՄ-երի միջոցով հրապարակումների իրականացումը,
- Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպումը (հանդիպումներ դպրոցների աշակերտների հետ, սեմինարներ ուսանողների հետ),
- Սեմինարների, կոնֆերանսների անցկացումը և այլն:

Շահակիցների տեղեկացմանն ուղղված պլանավորման, կազմակերպման և կառավարման գործընթացներն ԱԲՀ-ում իրականացվում են հիմնականում ԱԲՀ-ի պաշտոնական կայքի պատասխանատուի և Որակի ապահովման պատասխանատուի կողմից: Տեղեկացման աղբյուրներ են համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումները և խորհուրդները:

ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Շահակիցների հետ կապի հաստատման մեխանիզմներն են՝

- Ֆոկուս խմբային քննարկումներ, անհատական հարցազրույցներ,
- Հարցումների կազմակերպումը և անցկացումը,
- Շահակիցների բողոքների ուսումնասիրությունը,
- Միջոցառումները, սեմինարները, հաշվետվությունները և այլն,
- Շահակիցների հետ կազմակերպվող հանդիպումների արձանագրությունները:

Համալսարանի ներքին և արտաքին շահակիցների հետ կապի հաստատման և հետադարձ կապով տեղեկատվության ստացման գործընթացը պետք է կրի շարունակական բնույթ, հաշվի առնի շահակիցների կարծիքները և դրանց ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը՝ համալսարանի հետագա պլանները մշակելիս: Որքան արդյունավետ է կապը շահակիցների հետ, այնքան համալսարանը ավելի լավ է բացահայտում իր գործունեության առավելությունները, ուժեղ ու թույլ կողմերը:

Շահակիցների հետ կապի հաստատման գործիքներն են՝

- Համալսարանի կայքը, սոցցանցերը, էլեկտրոնային նամակները, հեռախոսագանգերը
- Անհատական տեղեկատվության փոխանակումը
- Ավարտական փաստաթղթերի պատճենները
- Աշխատանքի վայրի վերաբերյալ տեղեկատվությունը
- Շահակիցների շրջանում հարցումների անցկացման հարցաթերթերը

ԱԲՀ-ն ընդունում է հետադարձ կապի բոլոր մեխանիզմներն ու գործիքները՝ ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ եղանակով կիրառվող: Ընդհանուր առմամբ այն իրականացվում է Համալսարանի և շահակիցների նախաձեռնությունների շնորհիվ: Լավագույն փորձը ցույց է տվել, որ հետադարձ կապի մեխանիզմների կիրառման ամենաարդյունավետ մեթոդը տարբեր հնարավորությունների համադրումն է (գրավոր և բանավոր, ֆորմալ և ոչ ֆորմալ):

ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- ✚ Շահակիցներն ունեն հետադարձ կապ տրամադրելու հնարավորություն:
- ✚ Հետադարձ կապ կարող է տրամադրվել անհատների կողմից իրենց նախաձեռնությամբ կամ Համալսարանի խնդրանքներին ի պատասխան:
- ✚ Հետադարձ կապի գործընթացները պետք է լինեն համակարգված, հարգեն ուսանողների, անձնակազմի և շահագրգիռ այլ կողմերի իրավունքները:
- ✚ Հետադարձ կապի պատասխանները պետք է դիտարկվեն ժամանակին և, անհրաժեշտության դեպքում ընդունվեն:
- ✚ Բոլոր ներգրավված կողմերի գաղտնիությունն ու հեղինակությունը պետք է պաշտպանված լինեն:

✚ Հետադարձ կապի մեխանիզմները պետք է տարբերվեն ըստ Համալսարանի շահակիցների խմբերի կարիքների:

Ներքոնշյալ աղյուսակը ներկայացնում է ԱԲՀ-ի ներքին և արտաքին շահակիցների հիմնական խմբերի հետադարձ կապի մեխանիզմները.

Աղյուսակ 1.

ԱԲՀ-ում շահակիցների հիմնական խմբերի հետ հետադարձ կապի մեխանիզմները

Շահակիցներ		Մեխանիզմներ
Արտաքին շահակիցներ	Շրջանավարտներ	<ul style="list-style-type: none"> ▪ Խորհրդատվություն ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում ▪ Կրթական ծրագրից բավարարվածության հարցումներ ▪ Զբաղվածության, աշխատունակության վերաբերյալ հարցումներ ▪ Հարցազրույցներ կամ ֆոկուս խմբային քննարկումներ
	Գործատուներ	<ul style="list-style-type: none"> ▪ Շրջանավարտների վերաբերյալ գնահատական գործատուների կողմից ▪ Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի զեկույցները ▪ Համալսարանի աշխատակիցների հետ ֆորմալ և ոչ ֆորմալ հանդիպումներ, քննարկումներ
	Ոլորտի պետական և մասնագիտական կառույցներ	<ul style="list-style-type: none"> ▪ Հարցումներ շրջանավարտների շրջանում (կրթական ծրագրերից և շրջանավարտների մասնագիտական որակից գործատուների բավարարվածության հարցումների կազմակերպման իրականացման գործընթացներ) ▪ Հավատարմագրման մարմինների կողմից նախաձեռնած մշտադիտարկումներ և զեկույցներ ▪ Օրդինատուրայի ավարտին ստացվող կարծիք ուսանողների վերաբերյալ
Ներքին շահակիցներ	Պրոֆեսորա-դասախոսական անձնակազմ	<ul style="list-style-type: none"> ▪ Դասախոսների շրջանում անցկացվող հարցումներ (ռեսուրսների գնահատում, ...) ▪ Դասալսումներ ▪ Հարցազրույցներ ▪ Դասախոսի ինքնագնահատում ▪ Տարեկան կատարողականի գնահատում

		<ul style="list-style-type: none"> ▪ Ամբիոնի նիստեր ▪ Մասնակցություն գիտական խորհրդի և տարբեր հանձնաժողովների աշխատանքներին (օրինակ՝ ՄԿԾ-ների մշակման և վերանայման, առարկայական դասընթացների ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում) ▪ Հանդիպում-քննարկումներ (ֆորմալ և ոչ ֆորմալ)
	Ուսանողներ	<ul style="list-style-type: none"> ▪ Ընդգրկվածությունը գիտական խորհրդում և որակի ապահովման հանձնաժողովում, ուսանողական խորհրդում ▪ Ուսանողների շրջանում անցկացվող հարցումներ (պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և վարչական կազմի գործունեության գնահատման, Համալսարանի կողմից առաջարկվող ծառայությունների և առկա ռեսուրսների որակի գնահատման գործընթացներում) ▪ Ֆոկուս-խմբային քննարկումներ (ՄԿԾ-ի ղեկավարի, որակի ապահովման պատասխանատուի, կուրսի խորհրդատուի կողմից կազմակերպված և այլն)
	Ուսումնառության կազմ	<ul style="list-style-type: none"> ▪ Ուսումնառության կազմի ներկայացուցիչների շրջանում անցկացվող հարցումներ ▪ Ամբիոնի նիստեր ▪ Հարցազրույցներ

Ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, արտաքին փորձագետների/խորհրդատուների և մասնագիտական մարմինների մեկնաբանությունները, կարծիքներն ու արձագանքները ներկայացվում, քննարկվում են Գիտական խորհրդի նիստում և որոշվում են հետագա գործողությունները:

Հետադարձ կապի մեխանիզմի հիմնական տարրերն են՝

- մշտադիտարկում,
- վերլուծություն,
- տեղայնացում,
- պլանավորում:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՏՐԻՑ

Պատասխանատվություն և իրավասություններ շահակիցների տեղեկացման շրջանակում	ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր	Կայքի պատասխանատու	Ստորաբաժանումների ղեկավարներ
Տեղեկատվական նյութերի պատրաստում	S	S	Պ
Հաշվետվությունների պատրաստում	S,Պ	S,Պ	Պ
Համալսարանի գործունեության որակի վերաբերյալ հարցումներ	Պ	S	S
Գիտական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն	Պ	S	
Նորությունների և իրադարձությունների հրապարակում		Պ	
Տեղեկատվական ոլորտում գործունեության վերլուծություն		Պ	

*Պ- գործընթացի պատասխանատու

** S – տեղեկատվության ստացող

ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

Դասախոսների հետ հարցազրույցի ուղեցույց

- Որքա՞ն ժամանակ եք աշխատում ԱԲՀ-ում, ի՞նչ առարկաներ եք դասավանդում, ի՞նչ կրթություն ունեք, ի՞նչ մասնագիտություն:
- Ինչպե՞ս եք ընդունվել ԱԲՀ աշխատելու, հստա՞կ է բուհում դասախոսին ներկայացվող պահանջները, կներկայացնեք այդ պահանջները:
- Որտե՞ղ են սահմանված Ձեր աշխատանքային պարտականությունները: Ինչպե՞ս եք տեղեկացել:
- Բուհի ո՞ր ստորաբաժանման հետ եք հիմնականում աշխատում: Ինչպե՞ս եք կողմնորոշվում, թե որ հարցով բուհի որ ստորաբաժանմանը պետք է դիմել:
- Ո՞ր ժամերին եք ընդունում ուսանողներին, ո՞ր օրերին, նրանք տեղեկացված են դրա մասին: Ի՞նչ նպատակով եք հիմնականում դասավանդումից դուրս հանդիպում

ուսանողների հետ: Ինչպե՞ս և ինչ պարբերականությամբ են կազմակերպվում ուսանողների հետ խորհրդատվական հանդիպումները: Ինչպե՞ս եք տեղեկացնում ուսանողներին դրանց մասին:

- Ամբիոնում փաստաթղթաշրջանառությունն ինչպե՞ս է արվում, որքանով են հավաքված տեղեկությունները թարմացվում, ի՞նչ հաճախականությամբ:
- Դուք Ձեր աշխատանքային փաստաթղթերը հստակ դասակարգե՞լ եք, եթե մեկ այլ մարդ աշխատի Ձեր փոխարեն կկարողանա՞ անհրաժեշտ տեղեկատվությունը գտնել, թե միայն Դուք գիտեք դրանց դասավորվածության մասին:
- Ինչպե՞ս եք մշակում առարկայական ծրագրերը, ու՞մ հետ եք աշխատում մշակման ընթացքում, ինչպե՞ս եք վերանայում, ինչ հաճախականությամբ, ի՞նչն եք հաշվի առնում փոփոխություններ կատարելիս:
- Դասախոսների գնահատման ինչպիսի՞ մեխանիզմներ են կիրառվում բուհում:
- Վերապատրաստման դասընթացների մասնակցու՞մ եք, ինչպիսի՞ վերապատրաստումների կարիք ունեք, ինչպե՞ս և որքանով է բուհը նպաստում դրանց Ձեր մասնակցությանը:
- Դասախոսների խրախուսման ինչպիսի՞ մեխանիզմներ կան:
- Ինչպիսի՞ գիտահետազոտական աշխատանքներ են իրականացվում բուհում, Ձեր ամբիոնում: Որքանո՞վ եք ներգրավված այդ աշխատանքներին: Վերջին անգամ ի՞նչ հոդված եք գրել, ի՞նչ գիտաժողովի եք մասնակցել: Որտե՞ղ, ինչպե՞ս եք տեղեկացել այդ հնարավորության մասին:
- Դասը պլանավորու՞մ եք, որքանո՞վ եք հետևում այդ պլանին, ինչպե՞ս եք նոր թեման մատուցում ուսանողներին, ինչպե՞ս եք ամրապնդում հին թեման: Ուսանողների գնահատման ինչպիսի՞ մեթոդներ եք կիրառում:
- Ինչպե՞ս եք գնահատում դասավանդման մեթոդների արդյունավետությունը:
- Ինչպե՞ս և որքանո՞վ եք նպաստում ուսանողակենտրոն ուսուցմանը: Կո՞ղմ եք այդ մոտեցմանը և ինչո՞ւ: Եթե կողմ չեք, ինչո՞ւ:
- Ուսանողների կողմից ինչպե՞ս է գնահատվում դասընթացի արդյունավետությունը և ակնկալվող արդյունքների ձեռքբերումը:

Ուսումնասօժանդակ կազմի ներկայացուցիչների հետ հարցազրույցի ուղեցույց

- Որքա՞ն ժամանակ էք աշխատում ԱԲՀ-ում, ի՞նչ պաշտոն էք զբաղեցնում, ո՞րն է Ձեր հիմնական պարտականությունը, ի՞նչ կրթություն ունեք, ի՞նչ մասնագիտություն:
- Որտե՞ղ են սահմանված Ձեր աշխատանքային պարտականությունները: Ինչպե՞ս էք տեղեկացել: Ինչպիսի՞ փոխհարաբերություններ ունեք այլ ստորաբաժանումների հետ, ո՞ր ստորաբաժանումների հետ էք հիմնականում աշխատում: Ո՞ր փաստաթղթում է դա ամրագրված: Ինչպե՞ս են դասախոսները և ուսանողները կողմնորոշվում, թե որ հարցով ում պետք է դիմեն:
- Հիմնականում ի՞նչ հարցերով են ամբիոնին դիմում ուսանողները, որքա՞ն հաճախ են դիմում ամբիոնին ոչ ամբիոնին վերաբերող հարցերով, ինչո՞վ է դա պայմանավորված, ինչպե՞ս կարող են դասախոսներն իմանալ, թե ինչ հարցերով կարող են ձեզ դիմել:
- Ամբիոնում փաստաթղթաշրջանառությունն ինչպե՞ս է իրականացվում, որքանո՞վ են հավաքված տեղեկությունները թարմացվում, ինչ հաճախականությամբ:
- Դուք Ձեր աշխատանքային փաստաթղթերը հստակ դասակարգե՞լ էք, եթե մեկ այլ մարդ աշխատի Ձեր փոխարեն կկարողանա՞ անհրաժեշտ տեղեկատվությունը գտնել, թե միայն Դուք գիտեք դրանց դասավորվածության մասին:
- Ինչպե՞ս և ի՞նչ պարբերականությամբ և ո՞ւմ էք ներկայացնում հաշվետվություն Ձեր ստորաբաժանման գործունեության մասին:
- Ինչպե՞ս են մշակվում առարկայական ծրագրերը ԱԲՀ-ում, ո՞ւմ հետ էք աշխատում մշակման ընթացքում, ինչպե՞ս էք վերանայում, ի՞նչ հաճախականությամբ, ի՞նչն էք հաշվի առնում փոփոխություններ կատարելիս: Ամբիոնն ի՞նչպես է մասնակցում այդ գործընթացին: Առարկայական ծրագրերի մշակումն ու վերանայումն ինչպե՞ս է իրականացվում: Այդ գործընթացները կարգավորող ինչպիսի՞ փաստաթղթեր կան:
- Դասախոսների գնահատումն ինչպե՞ս է իրականացվում, ի՞նչ մեթոդներով, ի՞նչ չափանիշներով, դասախոսների զարգացմանն ուղղված ինչպիսի՞ դասընթացներ են կազմակերպվում բուհում, ինչպե՞ս էք վերհանում դասախոսների կարիքները, ի՞նչ դասընթացների կարիք կա, որտե՞ղ էք վերապատրաստվել, ինչպե՞ս է դրան նպաստել բուհը:
- Դասախոսների խրախուսման ինչպիսի՞ մեխանիզմներ կան:

- Ինչպիսի՞ գիտահետազոտական աշխատանքներ են իրականացվում բուհում, (*ամբիոնի վարիչին*) Ձեր ամբիոնում:
- Գրագողությունը ուսանողների և դասախոսների մոտ որքանո՞վ է տարածված: Ինչպե՞ս էք բացահայտում և կանխում նման դեպքերը:

Ուսանողների հետ խմբային քննարկման ուղեցույց

- Ինչու՞ էք ընտրել այդ մասնագիտությունը, ինչո՞ւ այդ բուհը:
- Պատմե՛ք ընդունելության մասին: Ի՞նչ դժվարություններ կան, հստա՞կ է ընդունելության ընթացակարգը:
- Ինչպե՞ս են ձեզ տեղեկացրել ԱԲՀ-ի կառուցվածքի մասին, ինչի համար ում պետք է դիմեք: Ինչի՞ց էք գոհ, ի՞նչը պետք է փոխել:
- Առարկաները համապատասխանո՞ւմ են ձեր մասնագիտական պահանջներին, դասապրոցեսը ուսանողակենտրո՞ն է, գնահատումը հստա՞կ է, մինչև քննությունները տրվու՞մ են գնահատման չափանիշները:
- Որքանո՞վ ես գոհ պրակտիկայից, որքանո՞վ է պրակտիկան արդյունավետ:
- Ինքնուրույն աշխատանքներն ինչպե՞ս էք մշակում, գրագողությունը տարածվա՞ծ է ուսանողների շրջանում, ինչո՞ւ են ուսանողները դիմում այդ քայլին:
- Գործու՞մ են խորհրդատվական ծառայություններ, ինչպիսի՞ նմանատիպ ծառայություններ կան, ինչպիսի՞ խորհրդատվությունների կարիք ունեն ուսանողները, ինչպե՞ս կցանկանայիք ստանալ խորհրդատվություն:
- Հստա՞կ է ձեզ համար որ հարցի համար ե՞րբ, ու՞մ կարող էք դիմել, ինչպե՞ս էք տեղեկացել:
- Կարիերային նպաստող ինչպիսի՞ ծառայությունների էք ծանոթ:
- Միջավայրը առողջ և անվտա՞նգ է, ձեզ վստահ ու անվտա՞նգ էք զգում համալսարանում:
- Ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմինը ո՞րն է, ինչքանո՞վ է ծանոթ ուսանողների խնդիրներին, որքանո՞վ է օբյեկտիվ և ճիշտ ներկայացնում ձեր շահերը:
- Բուհի ռազմավարական ծրագրին ծանոթ՞ էք, ինչպե՞ս, ո՞րն է առաքելությունը, որոնք՝ նպատակները:

- Ինչպե՞ս կարող են ուսանողները մասնակցել բուհում որոշումների կայացմանը, որքանո՞վ է այդ գործընթացը հնարավորություն տալիս ուսանողներին արտահայտելու իրենց կարիքները, պահանջները:
- Ջեղչային համակարգը, նպաստները տրամադրվու՞մ են, ինչպե՞ս են գործում ուսանողների խրախուսման մեխանիզմները:
- Տեղեկատվությունը ու՞մից էք ստանում, որ հարցի մասին որտեղից պետք է ուսանողը տեղեկացվի, ինչպե՞ս է իրականում դա տեղի ունենում:
- Ի՞նչ էք պատրաստվում անել բուհն ավարտելուց հետո (*ավարտական կուրսի ուսանողներին*)
- Որքանո՞վ էք վստահ, որ կրնդունվեք օրդինատուրա:
- Ի՞նչ առաջարկություններ ունեն բուհի որակը բարելավելու ուղղությամբ:
- Ի՞նչ քայլեր են պետք ձեռնարկել, որ բուհի շրջանավարտը աշխատաշուկային համապատասխան գիտելիքներ և հմտություններ ունեցող մասնագետ լինի բուհն ավարտելիս (*ավարտական կուրսի ուսանողներին*):
- Առհասարակ ինչպե՞ս կարող են համալսարանի ուսանողները արտահայտել իրենց կարծիքը, առաջարկություններն ու դժգոհությունները բուհի մասին, ինչ աղբյուրներով:
- Դասախոսական կազմի մասնագիտական կարողությունները ինչպե՞ս էք գնահատում:
- Որքանո՞վ էք ներգրավված բուհի գիտահետազոտական աշխատանքներին, երբևէ մասնակցե՞լ էք նման ծրագրի:
- Դասախոսներն իրենց գիտական աշխատանքների վերաբերյալ կիսվու՞մ են ձեզ հետ, դրանց բովանդակությունը ներկայացվո՞ւմ է ձեզ դասերի ընթացքում:
- Ի՞նչ էք ակնկալում բուհից այս փուլում:
- Եթե նորից ընտրության հնարավորություն ունենայիք, ո՞ր մասնագիտությունը կընտրեիք, ո՞ր բուհը, ինչու՞ :

Այլ բուհերից ԱԲՀ տեղափոխված ուսանողներին տրվող հարցեր

- Ինչու՞ տեղափոխվեցիք ԱԲՀ, որտեղի՞ց էք առաջին անգամ լսել ԱԲՀ-ի մասին, ո՞րն է առավելությունը, ո՞րը թերություն՝ ձեր առաջին բուհի հետ համեմատած:
- Տեղափոխման ընթացակարգը հստա՞կ էր, հարմա՞ր էր այն ձեզ:

- Ինչու՞ փոխեցիք ձեր մասնագիտությունը, ինչո՞ւ հենց այս մասնագիտությունը:

ԱԲՀ-ի հետ համագործակցության վերաբերյալ հարցեր

- Ինչպիսի՞ն է ԱԲՀ-ի հետ Ձեր համագործակցության բնույթը:
- Ձեր աշխատակիցների շարքում կա՞ն ԱԲՀ շրջանավարտներ: Եթե այո, ապա որքանո՞վ են նրանք որպես մասնագետ համապատասխանում Ձեր պահանջներին:
- Երբևէ դիմե՞լ եք ԱԲՀ-ի ղեկավարությանը մասնագետ տրամադրելու պահանջով:
- Որո՞նք են ԱԲՀ-ի հետ Ձեր՝ համագործակցության ընդլայնման ուղիները:

ՀԵՏԱՊԱՐԶ ԿԱՊԻ ՍՏԱԳՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Հետադարձ կապի ստացման մեխանիզմների վերանայման նպատակով սովորաբար կիրառվում են հետևյալ հարցադրումները՝

- ✚ Արդյո՞ք ԱԲՀ-ն հավաքագրում է որակական և քանակական տեղեկատվություն:
- ✚ Ինչպե՞ս են մշակվել հարցման գործիքները, ինչպե՞ս են մասնակցել այդ գործընթացին Որակի ապահովման պատասխանատուները:
- ✚ Ո՞րոնք են հետադարձ կապի ստացման հիմնական նպատակը և խնդիրները: Որո՞նք են հիմնական ոլորտները, որոնց մասին ստացվում է հետադարձ կապ:
- ✚ Որքա՞ն հաճախ է ստացվում հետադարձ կապը: Նկարագրել ըստ յուրաքանչյուր շահակցի: Բոլոր շահակիցները մասնակցու՞մ են հետադարձ կապի գործընթացներին:
- ✚ Ի՞նչ մակարդակում է հավաքագրվում հետադարձ կապ՝ դասընթաց, ՄԿԾ, համալսարան:
- ✚ Ինչպիսի՞ հարցադրումներ են հիմնականում կիրառվում հարցման ժամանակ՝ փակ հարցեր, բաց հարցեր, ինչո՞ւ:
- ✚ Ո՞վ է պատասխանատու հետադարձ կապի ստացման գործընթացների համար: Ինչպե՞ս և ո՞ւմ կողմից է վերլուծվում տեղեկատվությունը: Ինչպե՞ս են մյուս ստորաբաժանումները մասնակցում/օժանդակում այդ գործընթացին:
- ✚ Ինչպե՞ս և որտե՞ղ են պահպանվում լրացված հարցաթերթերը, ձայնագրությունները, վերլուծված տեղեկատվությունը: Ո՞ւմ է հասանելի դրանցից յուրաքանչյուրը: Հրապարակային են արդյո՞ք վերլուծությունները:
- ✚ Ինչպե՞ս է կիրառվում յուրաքանչյուր շահակցից խմբից հետադարձ կապի միջոցով ստացված տեղեկատվությունը:

- ✚ Ի՞նչ ձեռքբերում կնշեք տեղեկատվության կիրառման տեսանկյունից: Յուրաքանչյուր շահակից խմբի հետ ինչպե՞ս եք կիսում հետադարձ կապի միջոցով ստացված տեղեկատվությունը:
- ✚ Ինչպե՞ս և ո՞վ է որոշում, թե ի՞նչ գործողություններ են պետք ձեռնարկել այդ արդյունքների հիման վրա: Ո՞վ է մասնակցում այդ գործընթացին:
- ✚ Մշակվո՞ւմ է գործողությունների ծրագիր դրանց հիման վրա:
- ✚ Պլանավորված գործողությունները ո՞ւմ հետ են քննարկվում: Ինչպե՞ս է լուսաբանվում գործողությունների ընթացքը:
- ✚ Ո՞վ է հետևում գործողությունները իրականացվել են, թե՞ ոչ, որքանո՞վ են արդյունավետ եղել:
- ✚ Որքա՞ն ժամանակ է տևում արդյունքների հիման վրա գործողությունների ծրագրի մշակումը և իրականացումը:
- ✚ Ինչպիսի՞ ազդեցություն ունի յուրաքանչյուր շահակից խմբից ստացված տեղեկատվությունը:
- ✚ Որքանո՞վ են նրանց տրամադրած արձագանքը օգտակար որակի ապահովման համար:
- ✚ Հետադարձ կապի ստացման ո՞ր մեխանիզմն է ամենաարդյունավետը և ինչո՞ւ:
- ✚ Ո՞ր շահակից խմբերն են առավել ակտիվ և պասիվ մասնակցում հետադարձ կապի գործընթացներին: Ի՞նչ քայլեր են ձեռնարկվել նրանց մասնակցությունը ակտիվացնելու համար:
- ✚ Ի՞նչ հիմնական փոփոխություններ են տեղի ունեցել մինչ այժմ, որոնք հիմնված են հետադարձ կապի վրա:
- ✚ Ինչպիսի՞ խնդիրների և դժվարությունների եք հանդիպել հետադարձ կապի գործընթացների կազմակերպման ընթացքում: Ինչպե՞ս եք հաղթահարել դրանք:
- ✚ Որքանո՞վ է ԱԲՀ-ի ղեկավարությունը հետաքրքրված հետադարձ կապի գործընթացներով և ինչո՞ւ: Որքա՞ն մարդկային, ֆինանսական ռեսուրս է ծախսվում յուրաքանչյուր տարի այդ գործընթացների իրականացման համար:
- ✚ Արդյո՞ք ԱԲՀ-ն ունի մարդկային, ֆինանսական աջակցության կարիք հետադարձ կապի գործընթացների բարելավման համար:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՅՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հարցումները ԱԲՀ-ի որակի ապահովման ամենաընդունված մոտեցումներից են:

Հարցումներ կարելի է իրականացնել ինչպես տարբեր նպատակներով, այնպես էլ տարբեր մակարդակներում: Օրինակ՝ ուսանողների գոհունակության գնահատումը հաճախ կիրառվում է հետևյալ մակարդակներում՝

- *Համալսարանական մակարդակ*
- *Ֆակուլտետի մակարդակ*
- *Մասնագիտության կրթական ծրագրի մակարդակ*
- *Դասընթացի/մոդուլի մակարդակ*
- *Ավարտելուց 5 տարի հետո (tracer studies)*

ԱԲՀ-ում հարցումները կազմակերպվում են սոցիոլոգիական հետազոտության պահանջներին համապատասխան:

Կախված նպատակից՝ հարցումներ կազմակերպող խումբը կիրառում է թե՛ որակական, թե՛ քանակական մեթոդներ: Միևնույն հետազոտության ժամանակ ըստ անհրաժեշտության համակցում են տարբեր մեթոդներ՝ քանակական և որակական, ինչը հնարավորություն է տալիս երևույթի առավել բազմակողմանի, համապարփակ և խորը ուսումնասիրություն կատարել: Սակայն կան նպատակներ և խնդիրներ, որոնց ուսումնասիրման համար բավարար է կիրառել միայն դրանից մեկը:

Սոցիալական գիտություններում հիմնախնդիրների համապարփակ ուսումնասիրման նպատակով կիրառվում է *տրիանգուլացիայի տեխնիկան* (triangulation)՝ երկուսից ավելի հետազոտական մեթոդների կիրառությունն առավել հավաստի էմպիրիկ տվյալներ ստանալու համար:

Այսինքն՝ միաժամանակ օգտագործվում են տեղեկության ստացման մի քանի մեթոդներ՝ խմբային քննարկումներ, ձևայնացված հարցազրույցներ, դիտարկումներ, փաստաթղթերի վերլուծություն և այլն:

Մեթոդների սահմանումից հետո մշակվում են հարցաշարերը և հարցաթերթերը, որոնք անցնում են փորձարկման փուլ մինչև հարցման իրականացումը: Հարցաթերթերի փորձարկումից և վերջնականացումից հետո իրականացվում են հարցումները:

Արդյունավետության համար հարցաթերթերի միջոցով ձեռքբերված արդյունքները պետք է լինեն մատչելի և քննարկվեն թիրախային խմբերի, օրինակ՝ ուսանողների, դասախոսների հետ:

Այսպիսով, հարցաթերթերը պետք է լավ ուսումնասիրվեն, հատկապես, եթե դրանք օգտագործվում են դասախոսների վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով: Դրանց որակը կարևոր է, և այն պետք է շատ զգուշությամբ մշակել էթիկական բնույթի խնդիրներից խուսափելու համար: Դասախոսի նկատմամբ էթիկայի նորմերի խախտումից խուսափելու համար անհրաժեշտ է հարցաթերթերում ներառել ոչ թե դասախոսի անձին, այլ նրա մասնագիտական որակներին (օրինակ՝ նրա կիրառած մեթոդներին, ինչքանով են այդ մեթոդները նպաստում ուսանողի կողմից ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը և այլն) վերաբերող հարցեր:

Ուսանողին ուղղված հարցաթերթերի արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է պահպանել հետևյալ չորս սկզբունքները՝

- ուղղել այնպիսի հարցեր, որոնք կօգնեն ճանաչել արդյունավետ դասավանդումը, առանց հիմնային նշանակություն տալու մանկավարժական առանձին մոտեցումներին կամ նախապաշարումներին: Օրինակ՝ այնպիսի հարց, որը ստուգում է, թե արդյո՞ք դասախոսը օգտագործում է խառը տիպի ուսուցում, ենթադրում է, որ բոլոր լավ դասախոսները պետք է այն կիրառեն: Սակայն, այսպիսի մոտեցումը կարող է և նպատակահարմար չլինել բոլոր դասընթացների համար,

- պարունակեն հարցերի սահմանված քանակ և պատասխանների այլընտրանքային հնարավորություններ,

- վերհանեն տեղեկություն՝ ուսումնառության գործընթացում ուսանողների ներգրավվածության մասին, որպեսզի նրանց համար հասկանալի դառնա, որ դասավանդման և ուսումնառության արդյունավետությունը պայմանավորված է դասախոսի և սովորողի միջև համագործակցությամբ,

- ապահովեն հետադարձ կապ ուսանողների հետ՝ նրանց իրազեկելու, թե հարցաթերթերի միջոցով ստացված տեղեկատվությունը հետագայում ինչ փոփոխությունների են հանգեցրել:

ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ


Քանի որ հարցումների կազմակերպումն ու անցկացումը համալսարանի կողմից շարունակաբար կատարվող գործողություն է, ապա յուրաքանչյուր հարցումից հետո ԱԲՀ-ն կարող է վերանայել հարցաշարերը և հարցաթերթերը՝ դրանք բարելավվելու նպատակով:

Ավելին, պետք է խուսափել հարցաթերթերից, որոնք պարբերաբար չեն վերանայվում և/կամ շատ երկար են, որպեսզի չաղավաղվի հարցաթերթի բուն նշանակությունն ու օգտակարությունը: Մակայն պետք է հաշվի առնել, որ հարցաթերթերի փոփոխության դեպքում հնարավոր չի լինի համադրել տարբեր ժամանակներում կատարված հարցումների տվյալները: Հետևաբար փոփոխությունները պետք է կատարել խիստ անհրաժեշտության դեպքում: Անհրաժեշտ է հիմնավորել այդ հարցաշարերի վերանայման անհրաժեշտությունը, հստակեցնել թիրախային խմբերը, հարցաշարի նպատակը և կիրառումը ինքնավերլուծության չափանիշներում, նշել հարցման տվյալների վերլուծության արդյունքում գործընթացների հետագա բարելավման հնարավորությունները:

ԱԲՀ-ում բոլոր հարցումներն իրականացվում են գիտխորհրդի կողմից 2021թ. հաստատված կանոնակարգերի համաձայն:

Այսպիսով, հետադարձ կապի ստացումը ԱԲՀ-ի համար պարբերաբար իրականացվող, շարունակական գործընթաց է, գործողությունների ամբողջություն, որն ուղղված է ԱԲՀ ներքին և արտաքին շահակիցներից քննարկումների, հարցումների և այլ տիպի հանդիպումների միջոցով տեղեկատվության ստացմանը, վերլուծությանն ու կիրառմանը:

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**



ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻՎ

Հարգելի՛ ուսանող, Ուսումնական մասն իրականացնում է հարցումներ՝ գիտելիքի գնահատման գործընթացը բարելավելու նպատակով: Հարցումն անանուն է և Ձեր պատասխաններն ու կարծիքները կօգնեն մեզ՝ գնահատելու գիտելիքի գնահատման գործող համակարգի օբյեկտիվությունն ու արդյունավետությունը:

Խնդրում ենք մասնակցել հարցմանը և նշել պատասխաններից միայն մեկը V նշանով:

1. Նշեք Ձեր ֆակուլտետը _____ Կուրսը ____ Խումբը _____

2. Նշեք Ձեր սեռը

Արական

Իգական

1. Գնահատման չափանիշները

1.1. Դուք իրազեկված եք ԱԲՀ-ում գործող «Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման» կարգի մասին.

Այո

Ոչ

Մասամբ

1.2. Դասընթացի գնահատման չափանիշները (պահանջները) Ձեզ նախապես հայտնո՞ւմ են դասընթացի մեկնարկին.

Այո

Ոչ

Մասամբ այո

Դժվարանում եմ պատասխանել

1.3. Պահպանվում են արդյո՞ք ԱԲՀ-ում գործող «Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման» կարգով սահմանված գնահատման չափանիշները.

Այո

Ոչ

Մասամբ այո

Դժվարանում եմ պատասխանել

1.4. Կատարվե՞լ է արդյոք գնահատման չափանիշների փոփոխություն ուսանողների առաջարկով:

Այո

Ոչ

Մասամբ

Դժվարանում եմ պատասխանել

2. Գնահատման մեթոդները/ ձևերը և դրանց արդյունավետությունը

2.1. Կիրառվող գնահատման մեթոդները /ձևերը (բանավոր հարցումներ, սեմինարներ, ինքնուրույն աշխատանք, քննություններ, ...) հնարավորություն տալի՞ս են չափելու դասընթացի կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը ուսանողի կողմից.

Այո

Ոչ

Մասամբ

Դժվարանում եմ պատասխանել

2.2. Միջանկյալ ստուգումները հնարավորություն ընձեռու՞մ են ուսանողներին լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները.

Այո

Ոչ

Մասամբ

Դժվարանում եմ պատասխանել

2.3. Ամփոփիչ քննությունները հնարավորություն ընձեռու՞մ են ուսանողներին լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները.

Այո

Ոչ

Մասամբ

Դժվարանում եմ պատասխանել

2.4. Թեստային աշխատանքներն ուսանողներին հնարավորություն ընձեռու՞մ են լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները

Այո

Ոչ

Մասամբ

Դժվարանում եմ պատասխանել

2.5. Ընթացիկ ստուգումները /կիսամյակի ընթացքում ցուցաբերած ակտիվության գնահատումը /ուսանողներին հնարավորություն ընձեռու՞մ են լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները

- Այո
- Ոչ
- Մասամբ
- Դժվարանում եմ պատասխանել

2.6. Գնահատեք 1-5 թվանշաններով, որտեղ 1-ը շատ վատ է, 2-ը վատ, 3-ը՝ բավարար, 4-ը՝ լավ, 5-ը՝ շատ լավ.

	<i>Հարցադրումներ</i>	<u>1</u>	<u>2</u>	<u>3</u>	<u>4</u>	<u>5</u>
1.	Որքանով է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգը նպաստում տեսական գիտելիքների բացահայտմանը					
2.	Որքանով է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգը նպաստում գործնական հմտությունների և կարողությունների դրսևորմանը					
3.	Հաճախումներին տրվող միավորը՝ 16					
4.	Ուսանողի ընթացիկ ստուգմանը (ակտիվություն) տրվող միավորը՝ 20					
5.	Ուսանողի ինքնուրույն անհատական աշխատանքին տրվող միավորը՝ 14					
6.	Միջանկյալ ստուգումներին տրվող միավորը՝ 25+25					
7.	Ամփոփիչ քննությանը տրվող միավորը՝ 50					

3. Ուսանողների գնահատման օբյեկտիվությունն ու թափանցիկությունը

3.1. Ուսանողին հայտնի՞ է, թե քննական գործընթացի ժամանակ ինչպես է ձևավորվում նրա միավորը.

- Այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

3.2. Դասախոսներն արձագանքո՞ւմ են ուսանողների բողոքարկումներին.

- Այո
- Ոչ
- Չեմ առնչվել

3.3. Ուսանողի բողոքարկման արդյունքում կատարվե՞լ է ուսանողի միավորի փոփոխություն.

- Այո
- Ոչ
- Չեմ առնչվել

3.4. Քննաշրջանի և լուծարքի ժամանակ գնահատման մոտեցումը տարբերակված է: Դուք գոհ եք այդ մոտեցումից:

- Այո
- Ոչ

3.5. Օբյեկտի՞վ է արդյոք գիտելիքի հեռավար գնահատման գործընթացը.

- Այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

4. Գնահատման հետադարձ կապ

4.1. Գնահատման արդյունքների վերաբերյալ դասախոսից ստանում եմ հիմնավորում և/կամ խորհուրդ

- Այո
- Ոչ
- Մասամբ
- Դժվարանում եմ պատասխանել

4.2. Գնահատման արդյունքներն օգտագործվում են դասավանդման և ուսումնառության գործընթացները բարելավելու համար

- Այո
- Ոչ
- Մասամբ
- Դժվարանում եմ պատասխանել

5. Նշեք գնահատման գործընթացի ամենադրական կողմերը

6. Նշեք գնահատման գործընթացի ամենաբացասական կողմերը

7. Առաջարկություններ _____

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԱՍԱԽՈՄՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարգելի՛ դասախոս, գնահատման գործընթացը բարելավելու նպատակով Ուսումնական մասն իրականացնում է հարցումներ: Խնդրում ենք մասնակցել հարցմանը, քանի որ Ձեր պատասխաններն ու կարծիքները կօգնեն մեզ՝ գնահատելու գիտելիքի գնահատման գործող համակարգի օբյեկտիվությունն ու արդյունավետությունը:

Նշել պատասխաններից միայն մեկը V նշանով:

Նշեք Ձեր ամբիոնը _____

1. Գնահատման չափանիշները.

1.1. Դասընթացի գնահատման չափանիշները (պահանջները) հայտն^օւմ եք ուսանողին դասընթացի մեկնարկին.

- Այո
- Ոչ
- Մասամբ
- Դժվարանում եմ պատասխանել

1.2. Կատարվե՞լ է արդյոք գնահատման չափանիշների փոփոխություն ուսանողների առաջարկով:

- Այո
- Ոչ
- Մասամբ
- Դժվարանում եմ պատասխանել

2. Գնահատման մեթոդները/ ձևերը և դրանց արդյունավետությունը

2.1. Կիրառվող գնահատման մեթոդները հնարավորություն տալի՞ս են չափելու դասընթացի կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը ուսանողի կողմից.

- Այո
- Ոչ
- Մասամբ
- Դժվարանում եմ պատասխանել

2.2. Միջանկյալ ստուգումները հնարավորություն ընձեռո՞ւմ են ուսանողներին լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները.

- Այո
- Ոչ
- Մասամբ

Դժվարանում եմ պատասխանել

2.3. Ամփոփիչ քննությունները հնարավորություն ընձեռում են ուսանողներին լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները.

- Այո
- Ոչ
- Մասամբ
- Դժվարանում եմ պատասխանել

2.4. Թեստային աշխատանքներն ուսանողներին հնարավորություն ընձեռում են լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները

- Այո
- Ոչ
- Մասամբ
- Դժվարանում եմ պատասխանել

2.5. Ընթացիկ ստուգումները /կիսամյակի ընթացքում ցուցաբերած ակտիվության գնահատումը /ուսանողներին հնարավորություն ընձեռում են լիարժեք դրսևորելու իրենց գիտելիքները

- Այո
- Ոչ
- Մասամբ
- Դժվարանում եմ պատասխանել

2.6. Մատչելի է արդյոք գործող տեղեկագրերով աշխատելը.

- Այո
- Ոչ
- Մասամբ
- Դժվարանում եմ պատասխանել

2.7. Գնահատեք 1-5 թվանշաններով, որտեղ 1-ը շատ վատ է, 2-ը վատ, 3-ը՝ բավարար, 4-ը՝ լավ, 5-ը՝ շատ լավ.

	<i>Հարցադրումներ</i>	<u>1</u>	<u>2</u>	<u>3</u>	<u>4</u>	<u>5</u>
1.	Որքանով է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգը նպաստում տեսական գիտելիքների բացահայտմանը					
2.	Որքանով է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգը նպաստում գործնական հմտությունների բացահայտմանը					
3.	Որքանով է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգը նպաստում կարողությունների դրսևորմանը					
4.	Հաճախումներին տրվող միավորը՝ 16					

5.	Ուսանողի ընթացիկ ստուգմանը (ակտիվություն) տրվող միավորը՝					
6.	Ուսանողի ինքնուրույն անհատական աշխատանքին տրվող միավորը՝ 14					
7.	Միջանկյալ ստուգումներին տրվող միավորը՝					
8.	Անփոփիչ քննությանը տրվող միավորը՝					

3. Ուսանողների գնահատման օբյեկտիվությունն ու թափանցիկությունը

3.1. Ուսանողին հայտնի՞ է, թե քննական գործընթացի ժամանակ ինչպես է ձևավորվում նրա միավորը.

- Այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

3.2. Դասախոսներն արձագանքո՞ւմ են ուսանողների բողոքարկումներին.

- Այո
- Ոչ
- Չեմ առնչվել

3.3. Ուսանողի բողոքարկման արդյունքում կատարվե՞լ է ուսանողի միավորի փոփոխություն.

- Այո
- Ոչ
- Չեմ առնչվել

3.4. Քննաշրջանի և լուծարքի ժամանակ գնահատման մոտեցումը տարբերակված է: Դուք գոհ եք այդ մոտեցումից:

- Այո
- Ոչ

3.5. Օբյեկտի՞վ է արդյոք գիտելիքի հեռավար գնահատման գործընթացը.

- Այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

4. Գնահատման հետադարձ կապ

4.1. Գնահատման արդյունքների վերաբերյալ դասախոսից ստանում եմ հիմնավորում և/կամ խորհուրդ

- Այո
- Ոչ
- Մասամբ

Դժվարանում եմ պատասխանել

4.2. Գնահատման արդյունքներն օգտագործվում են դասավանդման և ուսումնառության գործընթացները բարելավելու համար

Այո

Ոչ

Մասամբ

